



# ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ

## ԱՆՎԶՆՈՐԴԱՆԻԱՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

# ՅԻՍԱԿԻ ԵՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ 8 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2019

## ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՒԻ ԳԻՐՔԵՆ (37.14-38)

**Ե**զեկիա պատգամաւորներուն ձեռքէն  
առաւ նամակը, եւ կարդալէ ետք գնաց  
Տիրոջ տաճարը մտաւ եւ Տիրոջ առջեւ փոեց  
զայն: Ապա Եղեկիա Տիրոջ աղօթեց, ըսելով. «Ո՞վ  
երկնաւոր Զօրքերու Տէր, Խսրայէլի Աստուածը,  
որ քերովեէն ներէն վեր կը նստիս. դո՛ւն ես միակ  
Աստուածը աշխարհի բոլոր թագաւորութեանց,  
որովհետեւ երկինք ու երկիր դո՛ւն ստեղծեցիր:  
Ականջ տուր եւ լսէ, Տէ՛ր, նայէ եւ տե՛ս այն  
պատգամը որ Սենեքերիմ թագաւորը դրկեց՝  
նախատելու համար քեզ, որ կենդանի Աստուածն  
ես: Իրաւ է որ Ասորեստանի թագաւորները ամբողջ  
աշխարհը աւերեցին եւ բոլոր ժողովուրդներու  
կուռքերը այրեցին, որովհետեւ անոնք աստուածներ  
չէին, այլ մարդոց ձեռքով շինուած փայտ ու քար  
էին եւ ուստի փճացան: Բայց դուն, ո՞վ Տէր, մեր  
Աստուածը, ազատէ՛ մեզ անոր ձեռքէն, որպէսպի  
աշխարհի բոլոր թագաւորութիւնները ճանչնան  
թէ միայն դո՛ւն ես Աստուածը»:

Այն ատեն Աստուած Ամոսի որդի Եսային զրկեց Եղեկիային մօտ, եւ անհկա գալով, ըստ «Այսպէս կըսէ աէրը, իսրայէլի Աստուածը.- Լսեցի ինչ որ աղօթքով խնդրեցիր ինձմէ Ասորեստանի Սենեքերիմ թագաւորին համար։ Ահա, Աստուած այսպէս կըսէ անոր.

«Սիոն քաղաքը, որ չկրցար գրաւել, պիտի անարդէ  
եւ արհամարհէ քեզ, Երուսաղէմի բնակչութիւնը  
պիտի հեգնէ ու ծաղրէ քեզ։ Գիտե՞ս դուն՝ ո՞վ  
նախատեցիր ու գրգռեցիր, որո՞ւ դէմ յոխորտացիր.  
Դուն արհամարհանքով նայեցար Խարայէլի Սուրբ  
Աստուծոյն որ բարձունքունքներուն մէջ կը բնակի. քու  
պատգամաւորներուդ միջոցաւ Տէրը նախատեցիր։  
Պարծենալով ըսիր. “Իմ բազմաթիւ կառքերովս  
մինչեւ լեռներու կատարը բարձրացայ, մինչեւ  
Լիբանանի գագաթները ելայ եւ կոտրեցի անոր  
մայրիներուն հպարտութիւնը, անոր նոճիներուն  
գեղեցկութիւնը, եւ հասայ մինչեւ հեռաւոր

**խորքը անտառին:** Ուզած տեղս կամուրջ նետեցի,  
եւ ուզած տեղս գետերն ու լիճերը ցամքեցուցի՝  
**Զե՞ս** լսած թէ աշխարհը ե՞ս ստեղծեցի կանուխին  
եւ ե՞ս կարգաւորեցի զայն ժամանակի սկիզբէն.  
եւ հիմա ե՞ս ուղեցի որ դուն ազգերն ու իրենց  
ամրոցները աւերես. ե՞ս էի քաղաքներու եւ  
բերդերու բնակիչները ձեռքդ յանձնողը. Զեռքս  
վերցուցի անոնց վրայէն, եւ իսկոյն չորցան,  
տանիքին չորցած խոտին պէս եղան, կամ՝ հունձքէն  
առաջ չորցած սէզին պէս: Արդ, ես գիտեմ՝ դուն ո՛ւր  
կը հանգչիս, դէպի ո՛ւր կ'երթաս եւ ուրկէ կու գաս:  
Ինձի հանդէպ արտայայտած քու զայրոյթիդ եւ  
թափած դառնութեանդ համար՝ բերանակապ պիտի  
անցընեմ դունչիդ, սանձ պիտի դնեմ կզակիդ, եւ  
քեզ եկած ճամբովդ ետ պիտի դարձընեմ”:

Իսկ քեզի, ո՞վ Եղեկիա, Տէրը այսպէս կ'ըսէ. Հետեւեալը քեզի նշան թող ըլլայ.- այս տարի անցեալ տարուան ցանքը պիտի ուտէք. իսկ գալ տարի՝ ինչ որ մնացած գտնէք. երբ երրորդ տարին գայ՝ պիտի սերմանէք ու հնձէք, այդի պիտի տնկէք եւ անոր պտուղը վայելէք: Ժողովուրդին մնացորդը դարձեալ արմատ պիտի նետէ իր հողին վրայ եւ պտուղ պիտի տայ: Այդ մնացորդը՝ երրուսալէմ ապաստանողները պիտի ըլլան, որոնք իրենց փրկութիւնը պիտի գտնեն Սիոն յերան վրայ:

Երկնաւոր Զօրքերու Տէրը նախանձախընդ-  
րութեամբ պիտի կատարէ այս խոստումները: Այդ  
պատճառով ալ, Տէրը այսպէս կ'ըսէ Ասորեստանի  
թագաւորին մասին. «Անիկա այս քաղաքը  
պիտի չմտնէ. ո'չ նետ պիտի արձակէ ասոր  
վրայ, ո'չ վահաններով պիտի յարձակի եւ ո'չ ալ  
պատնէշներով քաղաքը պիտի պաշարէ. եկած  
ճամբով ետ պիտի երթայ եւ այս քաղաքը պիտի  
չմտնէ: Ես պիտի պաշտպանեմ եւ ազատեմ  
այս քաղաքը, ինծի եւ իմ ծառայիս՝ Դաւիթին  
համար»,- կ'ըսէ Տէրը:

Նոյն գիշերն իսկ Տիրոջ հրեշտակը եկաւ եւ ասորեստանցիներու բանակէն հարիւր ութսունհինգ հազար մարդ կոտորեց. բանակայինները երբ առաւօտուն ելան, զանոնք բոլորը

մեռած գտանք: Սենեքերիմ թագաւոր հոնկէ ելաւ եւ վերադաշտել իր տունը, Նինուէ: Եւ երբ օր մը իր հովանաւոր աստուծոյն՝ Նասրաքի տաճարին մէջ երկրպագութիւն կ'ընէր, իր երկու զաւակները՝ Աղբամելէք եւ Սարասար, զի՞նք սուրով սպաննեցին եւ փախան Հայաստան գացին: Իսկ Սենեքերիմի տեղ թագաւորեց իր տղան՝ Ասորդանը:

**ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ  
ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒԽ ԳՐԱԾ  
ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԵՆ**  
(1.1-12)

**Մ**ենք՝ Պօղոս, Սիղուանոս եւ Տիմոթէոս, կը գրենք ձեզի՝ թեսաղոնիկեցիներու եկեղեցին որ մեր Հօր Աստուծոյ եւ Տէր Յիսուս Քրիստոսի կը պատկանի: Թող Աստուծած մեր Հայրը եւ Տէր Յիսուս Քրիստոս չնորհք եւ խաղաղութիւն պարգևեն ձեզի:

Եղբայրներ, պարտք կը զգանք եւ արդար կը դտնենք ձեզի համար միշտ գոհութիւն յայտնել Աստուծոյ, որովհետեւ ձեր հաւատքը հետզհետէ աւելի կ'աճի եւ ձեզմէ իւրաքանչիւրին սէրը իրարու հանդէպ աւելի կը խորանայ: Աստուծոյ եկեղեցիներուն մէջ մենք կը պարծենանք ձեզմով, այն համբերութեան եւ հաւատքին համար՝ որ դուք ցուցաբերեցիք ձեր կրած բոլոր հալածանքներուն եւ նեղութիւններուն մէջ: Ձեր այդ համբերութիւնը եւ հաւատքը ապացոյցը պիտի ըլլան Աստուծոյ արդար դատաստանին, որովհետեւ դուք արժանի պիտի ըլլաք Աստուծոյ արքայութեան, որուն համար այդքան կը տանջուիք: Արդարեւ, Աստուծոյ համար արդարութիւն պիտի ըլլայ ձեզ չարչարողները տանջանքով պատժել, իսկ ձեզի՝ տանջուածներուդ, հանգիստ պարգեւել մեզի հետ միասին, երբ մեր Տէրը Յիսուս Հրեշտակներու իր բանակով երկինքէն յայտնուի: Անիկա բոցավառ կրակով պիտի պատժէ անոնք՝ որոնք կը մերժեն զԱստուծած ճանչնալ եւ հնազանդիլ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի աւետարանին: Այն օրը այդպիսիները յաւիտենական մահուամբ պիտի պատժուին, զրկուելով Տիրոջ ներկայութենէն եւ անոր փառաւոր զօրութենէն, երբ անիկա գայ իր սուրբերուն մէջ փառաւորուելու եւ բոլոր իրեն հաւատացողներուն հիացումի առարկան ըլլալու: Այն օրը պիտի գիտնաք թէ ճշմարիտ էր ինչ որ յայտնեցինք ձեզի: Ահա թէ ինչու միշտ կ'աղօթենք ձեզի համար, որպէսզի Աստուծած ձեզ արժանի ընէ այդ կոչումին, իր զօրութեամբ կատարէ ձեր բոլոր բարի փափաքները

եւ արդիւնաւորէ ձեր հաւատքը, որպէսզի ձեզմով փառաւորուի մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի անունը, եւ դուք փառաւորուիք իրմով, մեր Աստուծոյն եւ Տիրոջ Յիսուս Քրիստոսի պարգեւած շնորհքովը:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ**

(14.12-24)

**Ա**պա Յիսուս տանտիրոջ ըսաւ. «Երբ ձաշի կամ ընթրիքի հրաւէր կու տաս, մի՛ կանչեր բարեկամներդ կամ եղբայրներդ, որպէսզի չըլլայ որ անոնք ալ քու հրաւէրիդ փոխարէն քեզ հրաւիրեն, եւ այս ձեւով քեզի հատուցում կատարած ըլլան: Ընդհակառակը, երբ ընդունելութիւն կը սարքես, կանչէ աղքատներն ու խեղանդամները, կաղերն ու կոյրերը եւ այն ատեն երանելի պիտի ըլլաս, որովհետեւ անոնք քեզի փոխարէնը հատուցանելիք ոչինչ ունին: Եւ գիտցած եղիիր, որ հատուցումդ պիտի ստանաս արդարներու յարութեան ժամանակ»:

Երբ սեղանակիցներէն մէկը այս խօսքերը լսեց, ըսաւ Յիսուսի. «Երանի՛ անոր որ Աստուծոյ արքայութեան մէջ ճաշ պիտի ուտէ»:

Յիսուս անոր հետեւեալ առակը պատմեց. «Մարդ մը կար որ մեծ ընթրիք մը սարքեց եւ շատեր հրաւիրեց: Ընթրիքի ժամուն իր ծառան զրկեց, որպէսզի հրաւիրեալներուն ըսէ. “Եկ՛ք, ամէն ինչ պատրաստ է արդէն”: Հրաւիրեալները սկսան մէկ առ մէկ հրաժարիլ: Առաջինը ըսաւ. “Արտ մը գնեցի. պէտք է երթամ եւ տեսնեմ զայն. հետեւաբար կը խնդրեմ որ ներողամիտ գտնուի”: Ուրիշ մը ըսաւ. “Տակաւին նոր ամուսնացայ. հետեւաբար չեմ կրնար գալ”: Ծառան վերադաշտ եւ իր տիրոջ պատմեց անոնց ըսածները: Այն ատեն տանտէրը վրդոված՝ ըսաւ ծառային. “Անմիջապէս քաղաք գնա եւ հրապարակներուն ու փողոցներուն մէջ ո՛քան որ աղքատ, խեղանդամ, կաղ եւ կոյր տեսնես, բոլորն ալ հո՛ս բեր”: Քիչ ետք ծառան վերադառնալով իր տիրոջ ըսաւ. “Տէ՛ր, հրամանդ կատարեցի, բայց տակաւին տեղ կայ”: Տէրը ծառային հրամայեց. “Քաղաքէն դուրս գնա եւ ճամբաներուն վրայ ու դաշտերուն մէջ ո՛վ որ գտնես, ստիպէ որ գայ, որպէսզի տունս լեցուի: Կըսեմ ձեզի, որ առաջին հրաւիրեալներէն ո՛չ մէկը ինծի հետ ընթրիքի պիտի նստի”»: